Հավելված N 24
Արդարադատության նախարարության
գլխավոր քարտուղարի
2022 թվականի հունվարի 12-ի N 23-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ վարչության ՎԵՑԵՐՈՐԴ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ԻՐԱՎԱԲԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Արդարադատության նախարարության վերահսկողական վարչության (այսուհետ՝ Վարչություն) վեցերորդ բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ իրավաբան (այսուհետ՝ Ավագ իրավաբան) (ծածկագիր՝ 12-32.8-Մ4-5):

1.2. Ենթակա և հաշվետու է

Ավագ իրավաբանն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ իրավաբանի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի Գլխավոր իրավաբանը կամ Բաժնի մյուս ավագ իրավաբանը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ. Սարգսյան 3/8:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. մասնակցում է քաղաքացիների (այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց) նամակների, գրավոր առաջարկությունների, դիմումների և բողոքների՝ օրենքով սահմանված կարգով քննարկմանը, քաղաքացիների նամակներում հաղորդվող՝ Նախարարության համակարգի հիմնարկների և կազմակերպությունների գործունեության մեջ տեղ գտած թերությունների վերացման համար միջոցառումների ձեռնարկման աշխատանքներին.
2. մասնակցում է իրավաբանական անձանց նամակների, գրավոր առաջարկությունների, դիմումների և բողոքների՝ օրենքով սահմանված կարգով քննարկմանը, քաղաքացիների նամակներում հաղորդվող՝ Նախարարության համակարգի հիմնարկների և կազմակերպությունների գործունեության մեջ տեղ գտած թերությունների վերացման համար միջոցառումների ձեռնարկման աշխատանքներին.
3. իրականացնում է Նախարարության «թեժ գծի» սպասարկման աշխատանքները:

Իրավունքները՝

• Բաժնի գործառույթներն իրականացնելու համար Նախարարության այլ ստորաբաժանումներից պահանջել անհրաժեշտ հիմքեր, հիմնավորումներ և այլ տեղեկություններ.

• Քաղաքացիների կողմից «թեժ գիծ» ծառայությանը ստացված առաջարկությունները, բողոքները սահմանված կարգով գրանցելու և Նախարարության քարտուղարությանն հանձնելու:

Պարտականությունները՝

• Ուսումնասիրել քաղաքացիներից (այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից) և իրավաբանական անձանցից ստացված նամակները, գրավոր առաջարկությունները, դիմումները և բողոքները և նախապատրաստել պատասխան գրություն.

• լսել քաղաքացիների կողմից «թեժ գիծ» ծառայությանը ստացված առաջարկությունները, բողոքները, ուղղորդել քաղաքացիներին, միջոցներ ձեռնարկել քաղաքացիների բողոքներում՝ Նախարարության համակարգի գործունեության մեջ տեղ գտած թերությունների վերացման համար:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1	Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
2	Ոլորտ	Իրավունք
3	Ենթոլորտ	Իրավունք
4	**Մասնագիտություն**	**042101.00.6 իրավագիտություն կամ 042101.00.7 իրավագիտություն**

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Փոփոխությունների կառավարում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակը

4.1.Աշխատանքի կազմակերպական և ղեկավարման շրջանակը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման համար:

4.2.Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման շրջանակներում:

4.3.Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4.Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5.Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: